ՊՈԼԻԲԻՈՍ. ԷԿՈՒՄԵՆԵԻ (ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՇԽԱՐՀ) ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Հելլենիստական դարաշրջանի ականավոր հույն պատմագիր Պոլիբիոսը (Ք.ա. 208/200-126/118թթ.) ծնվել է տոհմիկ ընտանիքում, հայրը Աքայական միության առաջնորդներից էր: Ստացել է հիմնավոր կրթություն՝ քերականություն, հռետորական արվեստ, իմաստասիրություն: Երիտասարդ տարիքից ներգրավվել է հասարակական-քաղաքական կյանքի մեջ, միության մի շարք պատասխանատու պաշտոններ է վարել: Անհաջող հակահռոմեական պատերազմից ու պարտությունից հետո՝ ի թիվս հազար պատանդների տարվել է Հռոմ և ապրել այնտեղ տասնութ տարի: Այդ ընթացքում մտերմացել է ժամանակի խոշորագույն հռոմեական պետական, քաղաքական և ռազմական գործիչ Սկիպիոն Էմիլիանոսին: Մասնակցել է նրա հիմնած գրական-իմաստասիրական խմբակին, ուր հաճախում էին մի շարք ականավոր հելլենիստական մտավորականներ և նրանց հռոմեացի համակիրներ:

Խմբակը խնդիր ուներ Հռոմ ներբերել հելլենիստական մտքի ձեռքբերումները՝ վերիմաստավորելու նրա անցած ուղին և ուրվագծելու «պատմական առաքելությունը»: Հռոմեական վերնախավը մեծ կարևորություն էր տալիս մտավոր այս իրագործումին. ընդամենը վաթսուն-յոթանասուն տարիների ընթացքին, երկու սերնդի անդուլ աշխատությամբ (Ք.ա. 218 – 146 թթ.), Հռոմը հաղթություն էր տոնել միջերկրածովյան ավազանի բոլոր փոքր ի շատե ներունակ պետությունների նկատմամբ՝ Կարթագեն, Մակեդոնիա, հելլենիստական Ասորիք: Եվ այժմ ժամանակն էր այս ամենը վերածելու «գրության տեսական տեքստի», քանզի միայն այս ճանապարհով ազգերը դառնում են իրենց անցյալի, ներկայի և (ինչու չէ նաև) ապագայի իրական տերը:

Այսպիսին էր այն «սոցիալական պատվերը», որին Պոլիբիոսը հետևեց իր ստեղծագործական ընտրությունը կատարելիս: Նա չանջրպետեց դրանից իր անձը և մասնավոր կյանքը: Հռոմակենտրոնությունը դարձավ նրա համար և՝ պատմահայեցողություն, և՝ անձնական ճակատագիր: Եվ դրանց երկուսի բանալին միևնույն տարողունակ հղացքի մեջ էր. «անցում եզականից ընդհանրականին»:

Համաշխարհային պատմության անդրադարձով՝ այս «անցումն» իր առավել ցայտուն դրսևորումն էր ստացել դեռևս հելլենիզմի դարաշրջանում: Ի

հետևանս Ալ Մակեդոնացու արշավանքների (Ք.ա.334-325 թթ.) սկզբնա-վորվել էր մի աննախադեպ քաղաքակրթական երևույթ, որի հիմնական չափունը հինարևելյան և հունական (պոլիսային) հասարակական համակեցական կերպերի փոխներթափանցումն ու համադրությունն էր[1]: Ենթադրվում էր անգամ ստեղծել ընդհանրական քաղաքական, կրոնական, մշակութային արժեքներ և հաստատություններ (Plut., De Alex. Fort aut Virt, I. 6): Սակայն Ալեքսանդրի մահվամբ նման ծրագրերը թաղվեցին: Ստեղծվեցին բազում մեծ եւ փոքր հելլենիստական պետություններ (Եգիպտոս, Սելևկյան Ասորիք, Մակեդոնիա, Պերգամ, Հույն-բակտրիական պետություն), որոնք իրենց հիմնական նպատակը տեսնում էին նվաճված ժողովուրդների նկատմամբ հույների և մակեդոնացիների տիրապետության ապահովման մեջ: Թույլ էին կառավարման տնտեսական, ընկերային, կրոնական լծակները և, ընդհակառակը, զորեղ՝ վարչառազմական հրամայականը: Հետազոտողներից մեկի դիպուկ բանաձևմամբ՝ հելլենիստական պետություններն ըստ էության «ռազմաքաղաքական իրադրություններ» էին՝ միապետի անձի քարիզմատիկ բացարձակեցմամբ[2]: Ուստի պատահական չէր այն իրողությունը, որ մի քանի տասնամյակ տևող ծաղկումից հետո, դրանք անխուսափելիորեն հակվում էին անկման: Եվ ծայր էին առնում հյուծիչ արտաքին ու ներքին պատերազմները, պալատական հեղաշրջումները, սպանությունները [Polyb.,V.88.3, VII. 4-5, VIII. 1-2, XIII. 4.8, XIV-37, XV. 34-35, XXIII. 10, XVII. 19, XXIX 18]:

Այսպիսին էր դրությունը միջերկրածովյան հելլենիստական պետություններում, երբ մեծ քաղաքականության անպարեզ իջավ Հռոմը: Կարծես պատմության տրամաբանությունն ու ճակատագիրը իրենք էին ճանապարհ հարթում նրան: Եվ հենց այս զգացողությունն էականորեն փոխեց հռոմեացիների պատմական ինքնահայեցողությունը. նրանք սկսեցին հավատալ, որ հենց իրենց պետությանն է վերապահված դառնալու պատմության կենտրոնն ու ուղղորդողը:

Այսու՝ Պոլիբիոսի «սոցիալական պատվերը» դառնում էր առավել քան հստակ ու մեկին: Ելնելով հունական պատմասիրության նվաճումներից՝ նա պետք է բացատրեր Հռոմի բարձրացումը: Այլ խոսքով՝ պետք է ձևակերպեր ոչ հեռավոր անցյալի պատմությունն իբր հետազոտական հարցադրումների մի ամբողջական շարք. երբ, որտեղ, ինչպես, ինչու, ինչ պատճառով:

---

[1] Ehrenberg V., Aspects of the Ancient World, Essays and Reviews N. Y., 1946, p. 175.
[2] Ehrenberg V., The Greek State, pp 191-193, 198.

Դրան հետամուտ Պոլիբիոսն ստեղծեց իր գլուխգործոցը՝ «Համաշխարհային պատմությունը»: Վերջինիս հիմնական գաղափարը ճակատագրի կողմից քաղաքակիրթ աշխարհի տարանջատ հատվածների միավորումմիահյուսումն էր *օրգանապես միասնական պատմության մեջ* (σωματοειδη ιστορια) և ուղղորդումը մեկ միասնական նպատակի [I,34, 4.1, III, 1.4, VIII, 2.4]: Այդ օրգանիզմում առկա էին մարմնական, հոգեկան և բանական սկիզբեր, որոնք նրան դարձնում էին ինքնաբավ ու ինքնակառավարելի: Հետևելով սոփեստներից ու Սոկրատեսից եկող ավանդույթին՝ Պոլիբիոսն այս գործում կարևորում է բանական սկզբի առանձնակի դերը: Միավորման միտված համաշխարհային պատմության մեջ այս դերը նա բաղդատում է Հռոմի դերին: Նրանք երկուսն էլ իրենց էներգետիկ ներգործությամբ ի զորու էին համադրելու պնկենդան օրգանիզմի (մարդ, պատմություն, տիեզերք) առանձին անդամները և հաղորդելու դրանց շունչ ու կյանք [I, 4, 7-8]:

Իր «Պատմության» մեջ Պոլիբիոսը չի անդրադառնում նոր ու անհայտ իրադարձությունների, դրանք առանձին-առանձին լուսաբանվել էին նախորդ ու ժամանակակից պատմագիրների երկերում: Փոխարենը նա իր խնդիրն է համարում բացահայտել այդ իրադարձությունների պատճառահետևանքային կապերն ու հարաբերությունները [III.7.7,31.11-13,32.6]: Դրանց միջոցով պատմության առանձին դրվագներ շարակարգվում են մեկ ընդհանուր կառույցի մեջ [1.4.3.III.32]: Այդ կապերն ունեն տրամաբանական (ռացիոնալ) բովանդակություն, ուստի պատմական կառույցը դարձնում են ապացուցելի հարաբերությունների ամբողջություն (αποδεικτικη ιστορια [II.37.3]: Այսու՝ Պոլիբիոսի հարցադրումն է՝ համակեցական-քաղաքական ինչ ձևի ι(պոլիտեիա) շնորհիվ Հռոմը հասավ համաշխարհային տիրապետության [I.1.5,III.1.4; VI.2.3; VIII.2.4]: Նրա համար ելակետային է Արիստոտելի քաղա-քագիտությունը, որի ծիրում պատմության շատ իրողություններ բացատրվում են պետական ձևերի տարափոխություններով:

«Պատմական ճակատագիր» և «պոլիտեիա» հղացքները առանցքային են Պոլիբիոսի «քաղաքակիրթ աշխարհի միավորման» տեսությունում:

Համաձայն ստոիկների՝ ճակատագիրն իրերի բանական ընթացակարգն է, դրանց պատճառահետևանքային շղթան և այդու՝ Բնության (Աստծո) Օրենքի (լոգոս) դրսևորումը [Diog Laert, VII 136,149; հմմ. VIII.27] Պատմության անդրադարձով դա իրադարձությունների հարընթացն է. այն ինչ եղել է, լինում է և լինելու է[3]: Դեռևս անտիկ թատրոնի ծիրում (մասնավորաբար Սոփոկլեսի

[3] Rist J.M., Stoic Philosophy, p 122.

ողբերգություններում) ճակատագիրը, մի կողմից, պարառում էր Աստծո ամենազոր կամքը (Օրենք, որ հանդես էր գալիս իբրև անխուսափելիություն կամ անհրաժեշտություն), մյուս կողմից՝ մարդու բանական և գործողութենական կամքը: Ճակատագիրը կամ բախտը (τυχη) հյուսվում էր այդ երկուսի հանդիպման-հանգուցալուծման կիզակետում[4]: Այլ խոսքով, ճակատագիրը վճռվում էր նաև մարդկանց մասնակցությամբ: Ուստի հույժ կարևորվում էր նրանց բարոյական պատասխանատվությունը թե՛ շրջակա իրականության, թե՛ միմյանց նկատմամբ:

Մեկնարկելով այս պատկերացումներից՝ Պոլիբիոսը գտնում է, որ պատմական անցքերի հաջողումը կամ ձախողումը շատ առումներով պայմանավորված է այն բանով, թե արդյոք դրանք առաջադրված են բանական մղումներով ու ծրագրերով [Polyb. III 4.5., 81, V. 88.3, IX. 12.1-4]: Առավել լայն ընդգրկմամբ՝ արդյոք դրանք համապատասխանում են աշխարհի բանական կարգին: Ընկերային համակեցական կարգերը (պոլիտեիա) իրենց քաղաքական, իրավական, կրոնամշակութային և բարոյահոգեբանական դրսևորումներով, ըստ Պոլիբիոսի,հանդիսանում են ճակատագրի և պատմության մարմնավորումը՝ իրական ժամանակի ու տարածության մեջ [VI. 2.9-10]: Հետևելով Արիստոտելի հայացքներին՝ Պոլիբիոսն ընկերային կարգերին վերագրում է բնական հարընթացություն, հընթացս որի դրանք՝ անցնելով ծագման, զարգացման, ծաղկման ու անկման փուլերով, վերասերվում են իրենց հակաձևերի: Այս գործընթացը պատմագիրը նույնացնում է երկաթի օքսիդացմանը, երբ վերջինս վերածվում է ժանգի [VI. 10.3]:

«Ժանգի օրենքն» առավել տիպական է, այսպես կոչված, *պարզ ընկերային համակեցական ձևերի* համար. միապետություն (մոնարքիա), ազնվապետություն (արիստոկրատիա), ժողովրդավարություն (դեմոկրատիա): Պոլիբիոսի համատեքստում, ի տարբերություն Արիստոտելի, այս ձևերի մեջ շեշտվում է նրանց պետական-քաղաքական կառույցը: Հարկավ, դա արիստոտելյան տեսության պարզեցում է, սակայն միանգամայն համապատասխանում է Պոլիբիոսի նպատակներին:

Եվ այսպես, մենիշխանությունը պետական այն ձևն է, երբ կառավարման բոլոր լծակները գտնվում են մեկի ձեռքին: Ընդսմին, նա մարմնավորում է Բնության աստվածային օրենքը և արդարությունը: Նա հանրույթի բարեկեցության երաշխավորն է, նրա կառավարման հիմնական սկզբունքը այլասիրու-

---

[4] Այս խնդրի մասին սոփոկլյան դրամայում տես Синицын А.А., Место Тюхе в трагедии Софокла "Царь Эдип" (к проблеме соотношения судьбы-случая и воли героя в греческой драме)// AMA, N 10, Саратов 1999, сс. 35-46 //www.ama.sgu.ru

թյունն է: Սակայն ժամանակի ընթացքին մենիշխանությունն իր տեղը զիջում է բռնապետությանը մենիշխանության հակաձևին: Կրկին կառավարում է մեկը, սակայն նա ծայր աստիճան եսակենտրոն է: Նրա օրոք ծաղկում են բռնությունն ու ապօրինությունը, զեխությունն ու ընչաքաղցությունը: Լավագույն քաղաքացիների առաջնորդությամբ հանրույթն ապստամբում է և վերջ դնում բռնապետությանը: Հաստատվում է ազնվապետություն, երբ իշխանությունն իրագործում են լավագույնները: Համակեցական միջավայրում նրանք վերահաստատում են Բնության օրենքի գերակայությունը: Կրկին արդարությունն ու այլասիրությունն առաջնորդում են մարդկանց առ հանուր Բարիքը: Սակայն «ժանգի օրենքը» վաղ թե ուշ այս պարագային նույնպես իրեն զգալ է տալիս, և ազնվապետությունը վերասերվում է իր հակաձևին օլիգարքիային: Լավագույնների փոխարեն ասպարեզ է իջնում գործիչների մի խումբ, որոնք առաջնորդվում է բացառապես իրենց նեղ եսակենտրոն մղումներով: Մոռացության է տրվում հանուր Բարիքը: Նորից զորանում են բռնությունն ու ընչաքաղցությունը: Ապստամբած ժաղավուրդն այս անգամ իշխանությունն իր ձեռքն է առնում և փորձում վերականգնել համակեցական լավագույն ավանդույթները: Հաստատվում է ժողովրդավարություն, որը, սակայն, ըստ Պոլիբիոսի, հույժ անկայուն պետական ձև է: Պատճառը պատմագիրը տեսնում է այն բանում, որ ժողովուրդն անկազմակերպ է և ամենևին աչքի չի ընկնում իր շահերի ճշգրիտ գիտակցությամբ: Ճիշտ է, ժողովրդավարության սկզբնական շրջանում նրան հաջողվում է վերահաստատել համակեցական նախկին բարի ավանդույթները, բայց դա հույժ կարճատև է լինում: Ժողովրդավարությունը վերասերվում է իր հակաձևին ամբոխավարության (օքլոկրատիա). մի քանի իշխանատենչ անձինք «սկսում են հրապուրել ժողովրդին սին խոստումներով» և աստիճանաբար վերածում նրան անկամ ամբոխի: Նա չունի այլևս իր կամքը, նա ամբոխավարների (դեմագոգոս) հլու կամակատարն է: Համակեցական կյանքի հաջորդ շրջափուլին հանրույթը կրկին վերադարձ է կատարում մենիշխանության և ամեն բան սկսվում է նորից [VI. 4. 7-10]:

Պարզ պետական ձևերի պարագային մարդկային գործոնի դերակատարությունն ընդհանուր առմամբ սահմանափակ է: **Ճիշտ է, նրանք ի զորու են** ներազդել ընթացիկ գործընթացների վրա, բայց փոխել իրերի ի վերուստ սահմանված կարգն անկարող են: Դրությունը զգալիորեն տարբեր է, այսպես կոչված, *խառը պետական ձևերի* դեպքում. այստեղ մարդկանց գործունեության շրջանակներն անհամեմատ ավելի լայն են ու կառուցիկ: Նրանց ազատության սահմանները լծորդված են նրանց կողմից պատմությունը ճանաչելու և կանխատեսելու ունակություններին:

Խառը պետական ձևերը բանաձևելիս՝ Պոլիբիոսը կրկին մեկնարկում է Արստոտելից: Դրանք համակեցական այն միջավայրերն են, որտեղ համադրվում են միապետության, ազնվապետության և ժողովրդավարության լավագույն հատկանիշները: Այդպիսիք եղել են Կրետեում, Սպարտայում և Կարթագենում: Այդպիսին է Պոլիբիոսի ժամանակաշրջանի Հռոմը, որի մեջ «համաչափորեն համադրվում են երեք պարզ ձևերը՝ չեզոքացնելով միմյանց բացասական կողմերը» [VI. 10.6.9]: Հռոմեական պետական կառույցում, համաձայն Պոլիբիոսի, մենիշխանությունը ներկայացնում էին երկու հյուպատոսները (կոնսուլ), ազնվապետությունը՝ ծերակույտը (սենատ), ժողովրդավարությունը՝ աշխարհաժողովը (կոմիտիաները): Դրանց հարմոնիկ համադրությունը պահանջում էր. «կառավարիչներից՝ սեփական իշխանության, իսկ ժողովրդից՝ սեփական ազատության սահմանափակում» [VI, 12]: Միայն այդ պարագայում էր հնարավոր հանուր համակեցական Բարիքը: Վերջինիս մարմնավորմամբ՝ Հռոմը ներկայանում էր իբրև տիեզերական լոգոսի երկրային պատկեր[5]: Այս տրամաբանությամբ՝ Պոլիբիոսը գտնում է, որ հռոմեական տիրապետությունը պետք է ընդունվի այլոց կողմից իբրև պատմական անհրաժեշտություն[III.4.3, XXXVI.11.2]: Դա ճակատագրի հետ քաղաքակիրթ աշխարհի համագործակցության ամենաարդյունական ձևն է համարվում:

Հռոմի պատմական բոլոր հաղթանակները Պոլիբիոսն առաջին հերթին առնչում է նրա կատարյալ պետական ձևի հետ: Եվ միջերկրածովյան ավազանի հելլենիստական պետությունների հետ նրա բախումը ներկայանում է հետևյալ լույսի ներքո. իբրև պարզ պետական կազմավորումներ վերջիններս վերասերվել էին իրենց հակածևերի՝ բռնապետությունների: Հաղթելով դրանց՝ Հռոմն իրագործում էր ճակատագրի կառուցիկ կամքը՝ բերելով ժողովուրդներին խաղաղություն ու բարգավաճում:

Սակայն, խառը պետական ձևերը, որքան էլ կայուն, վերջին հաշվով զերծ չեն «ժանգի օրենքի» ներգործությունից: Թեպետ դանդաղ, բայց նրանք նույնպես անցնում են վերասերման ուղով: Նրանց ծագումն ու զարգացումը Պոլիբիոսը կապում է մենիշխանության, ծաղկումը՝ ազնվապետության,

---

[5] Դրա դրսևորումներն են՝ ազնվաբարոյի և ստորի ճիշտ տարազատումը (VI.14.4-5) և դրան համապատասխան՝ պատիվների ու պատիժների ճիշտ սահմանումը (VI.12.7, 13.4,14.4,14.9), օրինաստեղծությունը համոզման խոսքի ու հավանության խոսքի համադրման միջավայրում (VI.12.4,14.10), նյութականի բանական կազմակերպումն ու վերահսկումը (VI.12.8,13.1-2,15.3-6, 17, 51-56) , պատերազմում վտանգին համարժեք բոլոր հոգեմտավոր ու նյութական կարությունների լարումը, որ ապահովում է հաղթանակ (VI.18.1-3,51.8, III.118.7-9), բարքերի ու օրենքների դաստիարակչական դերը (VI.5110-56.5):

անկումը ժողովրդավարության տարրերի գերակայության հետ [VI, 9,13-14; 51,4]: Կարթագենի դեմ մղած պատերազմների ընթացքին (երեք Պունիկյան պատերազմներ, Ք.ա. 264 – 146 թթ.) միմյանց բախվել էին երկու խառը պետական ձևեր, և պայքարն անզիջում էր: Հռոմը կարողացավ հասնել համոզիչ հաղթանակի: Հիմնական պատճառն այն էր, որ Կարթագենի պետական կառույցը գտնվում էր իր զարգացման վերջին փուլում: Այստեղ գերակայում էին ժողովրդավարության տարրերը. պետությունը միշտ չէ, որ կարողանում էր համդես գալ միակամ ու միածույլ: Մինչդեռ Հռոմը ծերակույտի գերակայությամբ ապրում էր իր ծաղկման դարաշրջանը: Անգամ օրհասական օրերին, լավագույնների իմաստուն կառավարմամբ, նա կարողանում էր գտնել իր առջև ծառացած խնդիրների օպտիմալ լուծումներ: Հաղթանակը ձեռք բերվեց առաջին հերթին հարդյունս ճիշտ ռազմավարության ու կառավարման: Եվ ապա միայն հասարակ հռոմեացիների քաջության, հնարամտության ու կորովի[III.118.9]:

Այս տրամաբանությունը հուշում էր, որ Հռոմը նույնպես չի կարող խույս տալ «ժանգի օրենքի» ներգործությունից, որ վաղ թե ուշ նրանում նույնպես սկսելու են գերակայել ժողովրդավարության տարրերը՝ առաջ բերելով համընդհանուր ճգնաժամ: Ինչպես ցույց տվեց Ք.ա. 1-ին դարի Հռոմի պատմությունը, պատմագիրն ընհանուր առմամբ ճիշտ էր. ներքին անլուծելի հակասություններից անկեց «փշուր-փշուր եղավ հանրապետությունը»: Հասարակական դասեր, քաղաքական խմբակցություններ, պետական կառույցներ, պրովինցիաներ - բոլորն «իրենց դուրս էին դնում Հանրապետությունից»:

Շնորհիվ իր պատմահայեցողական համակարգի Պոլիբիոսը կարողացել էր գուշակել ապագան: